# ԱՎԱՐՏԱԿԱՆ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտական թեմա՝** ՈՒսուցչի համագործակցությունը սովորողի ծնողների կամ նրանց օրինական Ներկայացուցիչների հետ, սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան Դաստիարակության հարցում

**Առարկա՝** ֆրանսերեն լեզու

**Հետազոտող ուսուցչուհի՝** Ադանալյան Արշակուհի Լևոնի

**ՈՒսումնական հաստատություն՝** Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ

**Երյան 2022**

# Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ, սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիրակության հարցում

Ներածություն

Ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ,
քանի դեռ սովորում է. Երբ նա դադարում է սովորել,
նրա մեջ մահանում է ուսուցիչը:
Կ. Դ. Ուշինսկի

Ելնելով նոր չափորոշիչների կիրառման տեսանկյունից, բավականին առաջընթաց կակրթության ոլորտում:

Նախատեսված է էապես բարձրացնել դպրոցների մանկավարժական ինքնավստահությունը, ուսումնական գործընթացը դարձնել ավելի երեխայակենտրոն չմոռանալով դպրոց- ուսուցիչ - աշակերտ - ծնող կապը:

Մանկավարժը հոգեբան լինելուց բացի պետք է օժտված լինի նաև մարդկային շատ որակներով, քանի որ նա, ոչ միայն խոսքով է սովորեցնում այլև իր կենսակերպով:

Նա, ոչ միայն հոգեբանորեն պետք է ճանաչի իր առջև նստած սաներին այլև հսկի նրանց միջանձնային հարաբերությունները, և ճիշտ ուղղորդի նրանց:

Ինչպիսի երջանկություն?

Երբ ընտանիքում ավելանում է ևս մեկ երեխա:

Համընդհանուր սեր, հոգատարություն, ուշադրություն, գեղեցիկ հագուստներ, գույնզգույն խաղալիքներ և ամենա ամենան, ինչ կարող է անել իր նորածին երեխայի համար յուրաքանչյուր ծնողը, ընտանիքը:

Առաջին քայլերը

Առաջին խոսքը

Ուզում եմ չեմ ուզում

Առաջին վիրավորանքը

Ուրախություն տխրություն

Այստեղից էլ սկսվում է ճանապարհ դեպի կյանք

Առաջին դասարան

Հասունացում

Հավատարիմ ընկերներ, ոչ հավատարիմ ընկերներ, և վերջապես դպրոցական կյանք:

Համագործակցություն՝ աշակերտ - դպրոց - ուսուցիչ - ծնող փոխհարաբերություններ

Այս դիտարկումով ուսուցիչը գործ է ունենալու մի էակի հետ, որը աշակերտն է:

Նա հանդիսանում է ծնողի և ուսուցչի դաստիարակման օբյեկտ, որին պետք է վերաբերվել բավականին նրբորեն և որից էլ կախված է նրա բարոյահոգեբանական տեսակը:

Պետք է հաջող լուծվեն դաստիարակության խնդիրները, պետք է հիմնվել միայն ընտանիք - դպրոց - ուսուցիչ հարաբերության վրա:

Համագործակցությունը ընտանիքի և դպրոցի դառնում է ամենաակտուալ և պահանջված:

Կրթության պրոցեսի ամբողջականությունը ստանալու և անձի ձևավորման համար անհրաժեշտ է աշակերտի և ուսուցչի միջև ստեղծել կապ նաև մասնակից դարձնել դպրոցի տնօրինությանը:

Ընտանիքը դա հասարակության մի մասնիկն է, այն կարևորագույն ինստիտուտ է դեռահասի սոցիալիստիկայի համար:

Որ կողմն էլ որ մեք վերցնենք՝ զարգացման է տանում, միշտ էլ կլինի որ, վճռական դերը, էֆֆեկտը տալիս է ընտանիքը:

Ժամանակակից դպրոցի խնդիրն է խթանել աշակերտի զարգացման ընթացքին:

Դպրոցը պետք է կարողանա օգնել ծնողներին, երեխայի մեջ զննելու նրա կարողությունները, նրա էությունը և նրա ուղղվածությունը՝ այս կամ այն առարկայի հանդեպ:

Միայն այս հիմքի վրա կարելի է էֆֆեկտիվ համագործակցություն կազմակերպել

Ընտանիք - դպրոց - մանկավարժ համագործակցությունը:

Երեխայի դաստիարակությունը դա կոնստիտուցիոն պատասխանատվությունն է ծնողի: Նրանք կոչված են ամրապնդել ուսուցչի նկատմամբ հարգանք ու պատիվ դրսևորել ուսուցչի հանդեպ, ինչպես և շրջապատի հանդեպ:

Ծնողները պետք է դաստիարակեն իրենց երեխաներին հարգանքի ոգով, նրանց մեջ սերմանելով ազնվություն այդ գործընթացում սերտ կապ պահելով դպրոցի հետ (հաճախ պետք է զրույցներ վարել ուսուցիչների հետ) իրենց երեխայի պահվածքի մասին տեղեկություններ հավաքելով պատրաստելով նրանց հասարակության համար

օրինակելի և օգտակար մարդ լինելուն: Այդ գործընթացում քիչ չէ նաև դպրոցի - ուսուցչի դերը:

Նախ դպրոցը պիտի ունենա որակավորված և հմուտ մանկավարժներ, որի հիմքի վրա նա պետք է կառուցի ուսումնադաստիարակչական աշխատանքներ:

Հիմք պետք է հանդիսանա գիտամանկավարժական փորձերը:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ ոչ բոլոր ծնողներն են տիրապետում անհրաժեշտ գիտելիքների՝ մանկավարժության և հոգեբանական բնագավառներում՝ մանկապարտեզներում կոչված են նրանց մատուցել գիտամանկավարժական աջակցություն, նպաստելով նրանց մշակութային դաստիարակությանը ընտանիքում:

Դեռևս նշում էր Խրիմյան Հայրիկը՝

,,Չի կարելի դաստիարակել երեխաներին, չդաստիարակելով նրանց ծնողներին":

Ի վերջո դպրոցի առաքելությունը երեխայի դաստիարակման մեջ պայմանավորվում է ծնող - ուսուցիչ - դպրոց հասարակական կապի մեջ:

Դեռևս 1929 թվականին սոցիոլոգիական և հետազոտական աշխատանքների հիման վրա, աշխատավորների ընտանիքներում 3 անգամ պակաս էր երեխա-ծնող հարաբերությունը, շփումը և դաստիարակումը, որի պատճառով ստեղծվում են երկարօրյա խմբեր և գիշերօթիկ դպրոցներ:

1980 այն կրկնապատկվել է, իսկ այսօրվա մասին խոսելն ավելորդ է:

Ծնող - երեխա հարաբերությունը

Հաշվի առնելով այս հանգամանքները դպրոցի դերը արդի ժամանակաշրջանում տասնապատկվում է, բարձրանում է դպրոցի ջերմ, երեխաների դաստիարակման դերը, նրանց հետ տարվող կոորդինացիոն աշխատանքներով:

Մանկավարժական համախմբված ներուժով կազմվում են անհատական պահանջ ներկայացնող ծրագրեր ըստ անհատի պահանջի:

Այս խնդիրների շրջանակը բավականին լայն է, մասնակի պայմանավորվածությամբ նրանց կարելի է բաժանել 3 մասի

1. Ուսումնադաստիարակչական աշխատանք, դպրոց - ընտանիք համագործակցություն
2. Նպաստել անհատի զարգացման և նրա ձևավորման խնդիրների մեթոդիկան է, որը կազմակերպվում է մանկավարժների կողմից, ընտանիքի հետ միասին:
3. Խմբային աշխատանք տարիքային անհատական - առանձնահատկություն ունեցող երեխաների վատ և լավ խթանմանը:

Գաղտնիք չէ որ ծնողների մի խումբ միայն և միայն կենտրոնանում են իրենց երեխայի գիտելիքների և առաջադիմության վրա, մոռանալով երեխայի գիտելիքների ուղղությունները և ֆիզիկականի մասին:

Եվ միայն մանկավարժն է, որ ուսումնական պրոցեսի ընթացքում կարողանում է հայտնաբերել և ճանաչել նրա ուղղվածությունները:

Այդ իսկ պատճառով, մանկավարժները ծնողներին հորդորում են և ոգևորում են, որ մատների արանքով չնայեն իրենց երեխայի նախասիրություններին:

Ժամանակակից դպրոցներում կազմակերպվում են խմբակներ, որոնցում ընդգրկվում են տարբեր տաղանդներ ունեցող երեխաներ:

Ծնողների հետ տարվող աշխատանքը ուսուցչի, հատկապես սկսնակ մանկավարժի գործունեության հատվածներից մեկն է: Այդ աշխատանքը պահանջում է բազմակողմանի պատրաստվածություն, առաջին հերթին՝ հոգեբանության և մանկավարժության իմացություն: Ուսուցիչն ընդ որում պետք է կարողանա մոտեցում գտնել ոչ միայն իր աշակերտի, այլև նրա ծնողների նկատմամբ:

Ինչպես մանկավարժները, այնպես էլ ծնողները ցանկանում են տեսնել իրենց երեխաներին առողջ ու երջանիկ:

Վերջիններս պատրաստ են աջակցել մանկավարժների նախաձեռնություններին, որոնք ուղղված են երեխաների հետաքրքրությունների, կարիքների բավարարմանն ու զարգացմանը: Ծնողները կյանքի մեծ փորձ, գիտելիքներ, իրադարձություններն իմաստավորելու կորողություն ունեցող հասուն մարդիկ են, ուստի մի շարք հարցերի, դաստիարակչական խնդիրների լուծման գործում մանկավարժը կարող ՝ անհրաժեշտ խորհուրդ ստանալ ծնողից: Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխային, նայել նրան տարբեր տեսանկյուններից ու դիրքերից, տեսնել տարբեր իրավիճակներում և, հետևաբար, օգնել մեծահասակներին հասկանալու նրա անհատական առանձնահատկությունները, զարգացնելու երեխայի ունակությունները, հաղթահարելու նրա արարքների և վարքի բացասական դրսևորումները, ձևավորելու կենսական արժեքավոր կողմնորոշիչներ:

Միևնույն ժամանակ ծնողները մեծամասամբ պրոֆեսիոնալ դաստիարակներ չեն: Նրանք հատուկ գիտելիքներ չունեն դաստիարակչության ոլորտում, դժվարությունների են բախվում երեխաների հետ շփումը կարգավորելու հարցում: Ուսուցիչներն ու ծնողները միասին փորձում են գտնել այդ խնդրի լուծման առավել արդյունավետ ուղիներ, նախորոքում մանկավարժական լուսավորության բովանդակությունն ու եղանակները:

Ընտանիքի և դպրոցի կապի եղանակները շատ բազմազան են: Իրեն առավել արդարացրած միջոց կարելի է համարել ծնողների կանոնավոր այցելությունները դպրոց և ուսուցիչների այցելություններն իրենց աշակերտներին, կամ համատեղ ծնողական-ուսուցչական ժողովները: Այդպիսի շփումով նրանք երկուստեք սկսում են ավելի լավ հասկանալ դպրոցականների անհատական առանձնահատկությունները, դա հնարավորություն է տալիս գտնել յուրաքանչյուր երեխայի անհատական դաստիարակության առավել ճիշտ մեթոդը, պարզել նրա ունակություններն ու հակումները: Ինչը օգնում է ճիշտ ընթացք տալ երեխաների ուսուցմանն ու դաստիարակությանը:

Տարրական դպրոցում ծնողների հետ տարվող աշխատանքի ձևերն ու մեթոդները, անշուշտ, պետք է հաշվի առնեն կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունները, որոնց մոտ այդ ժամանակահատվածում վերակառուցվում են ճանաչողական գործընթացները, զարգանում է մտածողությունը, ձևավորվում վարքի և կամքի ինքնակարգավորում, ընդլայնվում է շփման ոլորտը, ձևավորվում են հարաբերություններն ուսումնական կոլեկտիվում և այլն:

Ուսուցչի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը կարելի է բաժանել ժամանակային առումով հաջորդական երեք փուլերի:

Առաջին փուլը ներառում է դպրոցում երեխաների անցկացրած սկզբնական ժամանակահատվածը՝ սկսած ընդունվելու պահից: Առաջին փուլում իրականացվում է ծանոթություն դպրոցականների ընտանիքների հետ, երեխաների կենսապայմաններին և կենցաղին: Դրա համար օգտագործվում են առկա փաստաթղթերը, ծնողների և երեխաների հետ անցկացվող զրույցները, այդ թվում՝ դպրոցի հոգեբանի մասնակցությամբ: Արդյունավետ մոտեցում է ծնողների անկետավորում անցկացնելը: Հարցաթերթիկների վերլուծությունը թույլ է տալիս տեղեկանալ ընտանիքում դաստիարակության մեթոդների, երեխայի նախասիրությունների և վարքագծի, նրա տնային պարտականությունների, բնավորության գծերի մասին: Այդ փուլում ստացված տեղեկատվությունը ելակետ է ծառայում ծնողների հետ աշխատանքը ծրագրելու համար:

Ապագա առաջին դասարանցիների ծնողների հետ աշխատանքը պետք է սկսել դեռ նախքան ուսումնական տարվա մեկնարկը: Այսպես, սեպտեմբերի 1-ից մի քանի օր առաջ հավաքել ծնողներին, զրուցել և նրանց պատմածի միջոցով հեռակա ծանոթանալ ապագա աշակերտների հետ: Տեղեկանալ նրանց ունակությունների, հակումների, ֆիզիկական զարգացման մասին, պարզել, թե որոնք են նրանց սիրելի ոտանավորները, հեքիաթները, խաղերը, ինչով են ամենից շատ հետաքրքրվում և այլն: Մի քանի ժամ

զրուցելուց հետո ուսուցիչն արդեն բավական հստակ պատկերացում ունի այն մասին, թե ինչ շտկումներ, լրացումներ և փոփոխություններ պետք է կատարի երեխաների ուսուցման իր մեթոդում: Իսկ ծնողները զրույցներից տեղեկանում են, թե ինչ են անելու իրենց զավակներն ուսման ընթացքում, ինչպես է պետք նրանց համար նորմալ պայմաններ ապահովել տանը, հատուկ ուշադրություն դարձնել ռեժիմի խստիվ պահպանմանը դպրոցական սեղանի առջև երեխայի նստելու առաջին իսկ օրերից:

Նման զրույցները մտերմացնում են ուսուցչին ծնողների հետ և օգնում հետագա աշխատանքում:

Բացի այդ, շատ դպրոցներ <<բաց դռների օր>> են անցկացնում: Դա նշանակում է, որ նախապես որոշված օրը և ժամին դպրոցի աշխատողների կոլեկտիվը հանդիպում է ծնողների հետ: Այդ օրը հայրը կամ մայրը կարող է լսել դասղեկի հաշվետվությունը, դասախոսություն երեխաների դաստիարակության մասին, դիտել մանկական ինքնագործունեությունը, այցելել աշակերտների աշխատանքների բազմազան ցուցահանդեսներ և այլն:

Կարևոր դեր են խաղում ծնողական կոմիտեները, որոնք ընտրվում են արդեն առաջին ժողովում: Հասարակական աշխատանք կատարող ծնողները դպրոցի լավ օգնականներն են:

Բացի այդ, յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ժամանակ նախատեսի ծնողների հետ անհատական խորհրդակցությունների համար, ինչի մասին հարկավոր է նախապես տեղեկացնել նրանց: Այդ խորհրդակցությունները պետք է իսկապես անհատական, վստահալից լինեն: Դրանք մտերմացնում են դասղեկին և ծնողներին, հեշտացնում դաստիարակչական աշխատանքը երեխաների հետ:

Որոշ դպրոցներում ծնողները պատի թերթեր են պատրաստում, որտեղ կիսում են երեխաների դաստիարակության իրենց փորձը: Ծնողների և ուսուցիչների համատեղ ջանքերով աճում է երեխաների առաջադիմությունը, ամրապնդվում կարգապահությունը դպրոցում և տանը:

Երկրորդ փուլն ընդգրկում է տարրական դպրոցն ավարտելուն նախորդող ժամանակահատվածը: Դա հիմնական փուլն է կրտսեր դպրոցականների ընտանիքների հետ աշխատանքում: Այդ փուլում օգտագործվում են երեխաների դաստիարակության և ուսուցման գործում մանկավարժների և ծնողների փոխադարձ գործունեության տարբեր ձևեր ու մեթոդներ: Ընդ որում մանկավարժը պետք է.

- բարձրացնի ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակը,
- ուղղորդի ծնողների աշխատանքը՝ տնային պայմաններում երեխաների ուսուցումը ղեկավարելու գործում,

- օգնի ծնողներին երեխաների դաստիարակության միջոցների և մեթոդների ընտրության հարցում,

- ամրապնդի երեխաների և ծնողների վստահությունն ուսուցչի նկատմամբ և ծնողների հեղինակությունը երեխաների աչքում,

- ընդլայնի կրտսեր դպրոցականների ընտանիքների անդամների մասնակցությունը դաստիարակչական աշխատանքներին, դպրոցական միջոցառումներին:

Ծնողական ժողովը, լինելով ծնողների հետ տարվող աշխատանքի ավանդական ձև, կարող է կառուցվել նորովի՝ օգտագործելով տարբեր մեթոդներ և մոտեցումներ (բանավեճեր, գործնական խաղի տարրեր, սեմինար պարապմունքներ, գրքերի կամ ֆիլմերի քննարկում): Ծնողական ժողովների օրերին կարելի է կազմակերպել տարբեր ցուցահանդեսներ (լավագույն աշխատանքների, տետրերի, նկարների, ձեռագործի, մարզական նվաճումների), որոնք ցույց են տալիս երեխաների մտավոր զարգացումը: Լավ արդյունքներ է տալիս ընտանիքի հետ աշխատանքի ակումբային եղանակը:

Դաստիարակության, ծնողների, երեխաների և մանկավարժների միջև փոխըմբռման և կապերի ամրապնդման գործում մեծ արդյունք են տալիս անցկացվող համատեղ միջոցառումները. երեխաների համերգներն ու ներկայացումները ընտանիքի անդամների համար, ծնողների հետ դասարանի արշավները բնության գիրկ, էքսկուրսիաները թանգարաններ, կենդանաբանական այգի, այցելությունները թատրոն և տարբեր այլ միջոցառումներ: Դրանք նպաստում են նաև դասարանում կոլեկտիվի ձևավորմանը: Ընտանիքի և դպրոցի դաստիարակչական համատեղ աշխատանքում լայն հնարավորություններ է ընձեռնում երեխաների տատիկների և պապիկների ներգրավումը:

Ծնողների և երեխաների միավորմանը նպաստում է նրանց համատեղ աշխատանքը իրենց ընտանիքի պատմության ուսումնասիրման ուղղությամբ: Դա կարելի է անցկացնել թեմատիկ դասաժամերի տեսքով՝ տարրական դպրոցում երեխաների ուսման ժամանակաշրջանում: Այդ դասաժամերի ընթացքում երեխաները ծանոթանում են տոհմաբանության, հարազատների ազգանունների և մասնագիտության, ընտանեկան տոների և ավանդույթների, պատերազմի մասնակցած ազգականների մասին տեղեկությունների և հասկացությունների:

Մանկավարժի կողմից ծնողների հետ իրականացվող աշխատանքի բարելավման, նրանց հետ կապերի ամրապնդման գործում մեծ հնարավորություններ են ընձեռնում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները: Դրանք կարող են օգտագործվել ինչպես վերոնշյալ միջոցառումների կազմակերպման համար (թեմատիկ դասաժամեր, ընտանիքի պատմության ուսումնասիրություն, տարբեր տոների անցկացում), այնպես

էլ ծնողներին օպերատիվ կերպով տեղեկություններ փոխանցելու նպատակով, օրինակ, ինտերնետի միջոցով ծնողներին մատչելի էլեկտրոնային օրագիր վարելու եղանակով: Ընդ որում դա կարելի է կազմակերպել դասարանի սոցիալական ցանցի տեսքով, որի օգնությամբ ծնողները հնարավորություն ունեն ցանկացած պահի կապվել միմյանց կամ ուսուցչի հետ:

Ուսուցչի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքի երկրորդ փուլն ընդգրկում է տարրական դպրոցն ավարտելուն հաջորդող ժամանակաշրջանը: Այս փուլում շատ կարևոր է, որ տարրական դասարանների մանկավարժը փոխանցի երեխաների և նրանց ծնողների հետ աշխատանքի իր կուտակած փորձը ավագ դպրոցում երեխաներին ընդունող իր գործընկերներին: Դա մեծապես կօգնի պահպանել շարունակականությունը երեխաների հետ իրականացվող դաստիարակչական և ուսումնական աշխատանքում, փոխգործակցումը նրանց ընտանիքների հետ:

Գոյություն ունեն նաև ծնողների հետ շփման ավանդական և ոչ ավանդական ձևեր, որոնց էությունը մանկավարժական գիտելիքներով նրանց հարստացնելն է:

Ընտանիքի հետ փոխգործակցության ավանդական ձևերն են կոլեկտիվ, անհատական և հանրամատչելի - տեղեկատվական:

Ներկայումս ինչպես մանկավարժները, այնպես էլ ծնողները առանձնակի նախապատվություն են տալիս ծնողների հետ շփման ոչ ավանդական ձևերին:

Դրանք կառուցված են հեռուստատեսային և ժամանցային ծրագրերի, խաղերի նմանությամբ և ուղղված են ծնողների հետ ոչ պաշտոնական շփումներ հաստատելուն, մանկապարտեզի վրա նրանց ուշադրությունը գրավելուն:

Ծնողների հետ փոխգործակցության նոր եղանակներում կիրառվում է գործընկերության, երկխոսության սկզբունքը: Այդօրինակ մեթոդների դրական կողմն այն է, որ մասնակիցներին չի պարտադրվում պատրաստի տեսակետ, նրանց դրդում են մտածել, սեփական ելք փնտրել ստեղծված իրավիճակից:

Եվ, իհարկե, ծնողների հետ տարվող աշխատանքի, իսկ արդյունքում նաև ուսուցման որակի, կրտսեր դպրոցականների դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի հմտությունից, երեխաների և ծնողների աչքում նրա վայելած հեղինակությունից:

Ամփոփելով վերն ասված ամենը՝ նշենք, որ ծնողների հետ աշխատանքի պրակտիկան ցույց է տալիս, որ տարրական դպրոցում ծնողների հետ իրականացվող աշխատանքի վերոնշյալ նոր և ավանդական ձևերի ակտիվ կիառումն օգնում է ծնողների բարելավել երեխաների դաստիարակությունը, ամրապնդում ծնողների և երեխաների կապերը, թույլ տալիս երեխաների մոտ զարգացնել համագործակցության,

սեփական ուժերի նկատմամբ վստահության և ստեղծագործական ինքնադրսևորման ունակություններ:

Այսպիսով օրինակ:

1. Աշխատեք հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ:
2. Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տվեք ծնողներին ձեր հարգանքը և ուշադրությունը նրանց հանդեպ:
3. Փորձեք հասկանալ ծնողներին; ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:
4. Խոսել ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում և <<ռիսկային խմբի>> երեխաների ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:
5. Ծնողական ժողովի ընթացքում ձեր համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել ձեր և դպրոցի մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Եվ վերջապես, ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտին ներշնչման կարողությունը: Ուսուցիչի մոտեցումներից շատ բան է կախված: Ուսուցիչն է որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժեքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ:

Ես վստահ եմ ավելի քան, որ դուք շատ լավ կարող եք կողմնորոշվել և հասկանալ ձեր աշակերտների և ծնողների կարիքները ու խնդիրները, եթե սիրում եք ձեր աշխատանքը:

Баринов

Ծնող - դպրոց համագործակցության ֆունկցիաները և խնդիրները

Գլխավոր ֆունկցիաներն են մի քանիսը

1. Ինֆորմացիոն

2. Դաստիարակչական - զարգացնող (միասնական համակցված - մեթոդներ):

3. Կազմավորվող մեթոդ

4. Առողջապահական, բնապահպանական

5. Վերահսկողական

6. Կենցաղային

Այս խնդիրները հաջողություն կունենա միայն այն դեպքում, երբ կձևավորվի ակտիվ ծնողա-մանկավարժական փոխհամաձայնություն:

Ուսուցչի քրտնաջան հետազոտական աշխատանքի շնորհիվ միայն կարելի է հասնել ճիշտ ուղղվածության՝ օգնել աշակերտին - օգնելու տարբեր իրավիճակներում

Այստեղ մեծ է դասղեկի դերում, անցկացվող ծնողական ժողովները

Վերջաբան

Այս թեման կարելի է անվերջ քննարկել: Կարելի է ասել, որ դրանք միայն ժողովներ չեն, այլ ուսուցողական լսումներ են՝ հոգեբանամանկավարժական, որի ամենաճիշտ ներկայացնողը դա ուսուցիչն է: Մանկավարժը, որը ծանոթ է իր սաների հոգսերը և նախասիրությունները:

Նորը միշտ լավագույն հնի շարունակությունն է: Վերջում ուզում եմ մեջբերել և հիշեցնել Խրիմյան Հայրիկի կրթության և դաստիարակության մասին թեզերից:

Անհատի կատարելագործումը պետք է կատարվի 3 ուղղությամբ

1. Բարոյական - խղճի, սիրո, հավատի, բարեգործության և այլ հատկանիշների զարգացմամբ, որը պետք է տա օջախը, ծնողները և մանկավարժները:

2. Մտավոր

Մարդը պետք է դառնա ավելի լուսավոր, հաստատակամ, իրատես,ինքնաագիտակից և իր շրջապատում, իր անձը լավատես ճանաչող: Այդ գործունեության ընթացքում նույնպես կատարվում է օջախակրթություն:

3. Տնտեսական

Պետք է հեղաշրջվեն աշխատանքի ձևերը, աշխատանքը իր մեջ պարունակում է մարդ անհատի կատարելագործումը մանկավարժության մեջ: Արժանի գնահատելով կնոջ՝ մոր դերը դաստիարակության գործում:

## Գրականություն

1.Բայբեռդովա Լ.

Ինչպես զանգացնել ուսուցիչ, ընտանիք փոխհարաբերությունները

"Լույս 2004թ. Մոսկվա

2. Բառանով Ս. Պ. մանկավարժություն 1987թ.

3. Կորեյկո Ս. Ա. մանկավարժական լսումներ 2004թ.

4. Բասով Ն.Ֆ. սոց աշխատանքային հիմունքներ 2004թ.

5. Խրիմյան Հայրիկ ծնող երեխա Ծխական օջախ հարաբերություններ